

զում առ ինքն կուտեաց զաւրավարն Յայոց Մանուէլ: 22 Եւ մինչ դեռ խաղաղութեամբ Սուրենն իւրով բանական բանակեալ էր յանհոգս յանկարծ¹ Եւ աննեւզ խաղաղութեամբ, իբրեւ ոչ ինչ գոյր ի մէջ նոցա նենգութիւն դաւաճանութեան ըստ համբաւահան չարագործն Մերուժանայ, յանկարծաւրէն յեղակարծումն զաւրավարն Յայոց Մանուէլ հասանէր անկանէր ի վերայ բանակին Սուրենայ, Եւ զտասն հազարսն զՊարսիկսն միանգամայն կոտորէր: 23 Բայց զմարգպան Սուրենն միաձի արծակէր, շնորհել զարեւն իւր՝ պարգէւ արարեալ: 24 Եւ զարմացեալ Սուրեն ընդ իրսն ընդ այնոսիկ թէ ընդէ՞ր, Է՞ր աղագաւ նա զայս արդեւք գործեաց. Եւ ասէ Մանուէլ ցՍուրեն. Չքեզ վասն բարեկամութեան սիրոյն արծակեալ, ողջանդամ երթիջիր զճանապարհս քո. այլ ես ի Պարսկաց ի խափս այլ ոչ անկայց: 25 Եւ ինքն Մանուէլ Յայոց զգունդն կազմէր, Եւ զարսն պատրաստէր. Եւ գիտաց այնուհետեւ թէ մեծ թշնամութիւն յարոյց Եւ մեծ զրգռութիւն ընդ թագաւորին Պարսից: 26 Եւ յայնմ հետէ զաւրավարն Յայոց Մանուէլ հանդերձ ամենայն գնդան զտիկին Չարմանդուխտ զկին թագաւորին Պապայ ի գլուխ առեալ, ի տեղի թագաւորացն շրջեցուցանէին. Եւ ինքեանք կային ի մարտի պատերազմին յաղագս շինութեան աշխարհին Յայոց յամենայն կողմանց ընդ թշնամիս Եւ ընդ սահմանակիցս՝ որ շուրջ զիւրեամբք էին, Եւ աւելի ընդ զաւրսն Պարսից² զամենայն աւուրս կենաց իւրոց. բայց Մերուժանն գնայր անդր առ թագաւորն Պարսից ամբաստան զՄանուէլէ:

ԳԼՈՒԽ ԼԹ.

1 Յաղագս Գումանդ Շապիոյ՝ որ առաքեցաւ ի թագաւորէն Պարսից տալ պատերազմ ընդ Յայս, Եւ սատակեցաւ ի Մանուէլէ զաւրաւք իւրովք հանդերձ:

2 Ապա թագաւորն Պարսից արծակեաց ի վերայ Յայոց զԳումանդ Շապուհ քառասուն Եւ ութ հազարաւ, զալ առնուլ ակերել զերկիրն. Եւ եկին հասին նոքա մինչեւ ի սահմանսն Յայոց՝ որ յԱտրպայական կուսէն էր: 3 Ապա իբրեւ զայն լսէր զաւրավարն Յայոց Մանուէլ, Եւ գումարէր զգաւրսն իւր ըստ բռնոպ ժամանակին որչափ Եւ եկն ի ձեռն իւր՝ քսան հազար, Եւ ճեպեաց Մանուէլ Եւ եհաս ընդդէմ գնդին, Եւ արկանէր ի սուր զգաւրսն Պարսից. Եւ զԳումանդ Շապուհն սպանանէր, Եւ դարձեալ ելանէր մեծաւ յաղթութեամբ:

1 *Օրինակ մի՝ յանկասկած*

2 *Յոր. գորքն Պարսից*